

ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերի 8-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի է ունենում 1975—1976 թթ. ուսումնական տարեշրջանի հանդիսավոր բացումը՝ նախագահությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Հանդիսությանը ներկա են լինում Մայր Աթոռի միաբանությունը և պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսությունն ու ուսանողությունը և այլ հրավիրյալներ:

Հանդեսն սկսվում է «Հայր մեր»-ով: Հոգեվոր ճեմարանի երգչախումբը կատարում է «Աշակերտք Քրիստոսի» և «Որք զարդարեցին» շարականները: Մայր Աթոռի միաբան տ. Թորգոմ աբեղա Մուշեղյանը ընթերցում է ս. Ավետարանից «Սերմնացանի առակը» (Ավետարան ըստ Մարկոսի, գլ. Դ):

Ավարտական լսարանի ուսանող Միսակ սրկ. Մարգարյանը ընթերցում է Նարեկից (Բան ԼԴ) սուրբ Հոգուն ուղղված աղոթքաղերսը:

Այնուհետև բացման խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը՝ Վեհափառ Հայրապետին վստահեցնելով, որ հոգեվոր ճեմարանն առաջիկա տարում ևս Աստուծո օրհնությամբ կշարունակի իր ուսումնա-դաստիարակչական գործը:

Հոգևոր ճեմարանի երգչախումբը կատարում է «Ճեմարանական քայլերգ»-ը:

Այնուհետև օրհնության խոսք է ասում Վեհափառ Հայրապետը՝ հոգևոր ճեմարանի դասախոսությանը և ուսանողությանը բարեմաղթելով լիակատար հաջողություն առաջիկա ուսումնական տարում:

Հանդեսն ավարտվում է խմբովին երգված Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի արտասանած «Պահպանիչ»-ով:

Հոգևոր ճեմարանի դասախոսությունը և ուսանողությունը աջահամբույրով ստանում են Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

Սեպտեմբերի 9-ին, առավոտյան ժամը 9.30-ին, լսվում է առաջին զանգը: Ճեմարանն անցնում է աշխույժ ու խանդավառ ուսումնառության:

Հոգևոր ճեմարանն այս տարի իր աշխատանքները սկսում է 34 ուսանողներով.

Ա դասարան՝ 6
Բ դասարան՝ 8
Գ դասարան՝ 10
Բ դասարան՝ 10

Դասախոսական կազմը, ինչպես միշտ, այս անգամ էլ գլխավորում է Վեհափառ Հայրապետը: